



ՆԱԶԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԹՈՎՄԱՍԻ

Տեխնիկական գիտությունների

թեկնածու, դոցենտ

1960-1966 թվականներին աշխատել է Կիրովականի

(այժմ Վանաձոր) «Ավտոմատիկա» ԻԿԲ-ում,

այնուհետև «Ավտոմատիկա» ԳՀԻ-ում:

Բուհում դասավանդում է 1966 թվականից:

1980- 1990 թ.թ. ԵրՊԻ Կիրովականի մասնաճյուղի «Մեխանիկա-

մեքենաշինական» ֆակուլտետի դեկան, 1992թ. «Մետաղահատ հաստոցներ և գործիքներ»

ամբիոնի վարիչ՝ համատեղությամբ, 1990-1995թ.թ. ԵրՊԻ Կիրովականի մասնաճյուղի

(ՀՊՃՀ Պոլիտեխնիկ Վանաձորի մասնաճյուղ) ուսումնական աշխատանքների գծով

փոխտնօրեն 1995 թվականից ուսումնամեթոդական բաժնի վարիչ:

1983-87թ.թ. ընտրվել է «Ավտոմատիկա» ԻԿԲ-ի գիտատեխնիկական խորհրդի անդամ, իսկ

1982-87 թ.թ. Կիրովականի քաղկոմին կից Մեքենաշինության բյուրոյի պատասխանատու

քարտուղար:

Գիտական և ուսումնամեթոդական բազմաթիվ աշխատությունների, այդ թվում՝ բուհերի

համար ՀՀ Կ և Գ նախարարության կողմից հաստատված «Մետաղահատ գործիքներ»

(2007թ., ՀՊՃՀ 1-ին մրցանակ) դասագրքի և «Մետաղահատ հաստոցներ և գործիքներ»

ուսումնական ձեռնարկի (2009թ.), « Методы планирования факторных экспериментов при

решении опытно-экспериментальных задач » (2009թ.) և «Մետաղների կտրման հիմունքներ և

կտրող գործիքներ» (2017թ.) մենագրությունների, ինչպես նաև 4 հեղինակային

վկայականների հեղինակ: 2019 թվականին հրատարակել է «Տեխնոլոգիական մեքենաներ և

սարքավորումներ, Մետաղների կտրում և կտրող գործիքներ» ուսումնամեթոդական

ձեռնարկը, որը նախատեսված է առարկաների դասավանդման մեթոդաբանությանը:

Բարձրագույն կրթական ոլորտում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների

ներդրման նպատակով հեղինակի կողմից մշակվել են էլեկտրոնային քեյս-փաթեթներ՝

«Կտրող գործիքներ» (2007թ.), «Մետաղահատ հաստոցներ և գործիքներ» (2009թ.),

«Տեխնոլոգիական մեքենաներ և սարքավորումներ» (2019թ.), «Մետաղների կտրում և

կտրող գործիքներ» (2019թ.), «Դասախոսությունների տեսաձայնագրություններ» (2021թ.),

(<https://polytech.am/onlinelecturs/eldas1/>, (<https://polytech.am/onlinelecturs/eldas2/>,

<https://mikayelnajaryan.com>):

Ուսուցման ինտերակտիվ մեթոդների ներդրմանը նվիրված գեկուցումներ գիտաժողովներում

- «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման օրինակներ բարձրագույն կրթության ոլորտում», Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ և կայուն զարգացում: Միջազգային գիտաժողով նվիրված ԼՂՀ անկախության հռչակման 18-րդ տարեդարձին: Զեկուցումների հիմնադրույթներ: Ստեփանակերտ, 25-26.09. 2009թ.:
- «Միջավայրային բարեփոխումները ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղում»-Կրթության բարեփոխումներ, հիմնախնդիրներ, Հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2010թ.:
- Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը բարձրագույն կրթության ոլորտում, Երևան, 2020թ. ՀԱՊՀ(Պոլիտեխնիկ) Լրաբեր, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2020թ.:
- Внедрение современных технологий обучения в Национальном политехническом университете Армении, Печатный, 26 марта 2021 г. Новые технологии высшей школы Наука, техника, педагогика, Материалы Всероссийской научно-практической конференции «Наука – Общество – Технологии – 2021» (Россия, Москва, 26 марта 2021 года).
- Դասավանդման արդի տեխնոլոգիաների կիրառումը և ուսանողի անհատական աշխատանքի կազմակերպման խնդիրները, Երևան 2021թ., ՀԱՊՀ(Պոլիտեխնիկ), Բամբեր, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2022թ.:

Մասնակցությունը կրթական բարեփոխումներին նվիրված միջոցառումներին

Tempus-ի 15-ամյակին նվիրված (30 նոյեմբեր, 2010, ԵՊՀ) և այլ նախագծերի խորհրդաժողովներին, սեմինարներին (ՀՊՃՀ, ՎՊՄԻ, 2009-2010), ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված փորձագետների վերապատրաստման դասընթացներին, 2013-2014թթ., մասնակցություն ՈԱԱԿ-ի վերապատրաստման եռափուլ դասընթացներին, 2016թ. մարտ-ապրիլ: ՈԱԱԿ-ի հավաստագիր 2016թ.:

Գյուտեր

- Մետաղների կտրման գործոնների գնահատման եղանակ: Հեղինակային արտոնագիր թիվ 2167A 2008թ.: Գյուտի հայտ AM 20070126, 25.11.2008թ.:
- Բազմանիստ չարվող կարծրահամաձուլվածքային թիթեղներով մետաղների մշակման եղանակ: Հեղինակային արտոնագիր թիվ 2456A 2009թ.:
- Գյուտի հայտ AM 20090030, 25.10.2010թ.:

- Գայլիկոնի օպտիմալ երկրաչափական պարամետրերի որոշման եղանակ: Հեղինակային արտոնագիր թիվ 2565A 2011թ.:
Գյուտի հայտ AM 20110033, 25.11.2011թ.
- Բարձր ճշտության անտենայի հայելու օպտիմալ բաղադրության ընտրության եղանակ: Հեղինակային արտոնագիր թիվ 2991A 2016թ.:
Գյուտի հայտ AM 20150094, 25.01.2016թ.:

Պարգևներ

- Կրթության բնագավառում մատուցած ծառայությունների և անբասիր աշխատանքի համար ՀՀ Կ և Գ նախարարության կողմից արժանացել է՝ **պատվոգրերի** (2003թ., 2018թ.) **վաստակագրի** (1999թ.), **շնորհակալագրի** (2008թ.):
- ՀՊՃՀ(Պոլիտեխնիկ) 80-ամյակի հոբելյանի կապակցությամբ **վաստակագրի** (2013թ.):
- ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի հիմնադրման 50-ամյակի հոբելյանի կապակցությամբ ՀՊՃՀ բարձրագույն պարգևի՝ **Ոսկե հուշամեդալի** (2009թ):
- «ՀՊՃՀ Լավագույն դասագիրք» անվանակարգում հայտարարված մրցույթի հաղթող՝ **առաջին կարգի մրցանակ** (2007թ):
- ՀԱՊՀ 2020/2021 ուստարվա «Դասավանդման արդի տեխնոլոգիաներ կիրառող լավագույն դասախոս» համալսարանական մրցույթի հաղթող՝ **առաջին կարգի մրցանակ** (2021թ.):